

Մեխանիկամեքենագիտական ֆակուլտետի դեկան,
«Կիրառական մեխանիկա» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
Կարեն Ստեփանի Արզումանյանի

Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- 1972թ. ավարտել եմ Երևանի Շևչենկոյի անվան ռուսական միջնակարգ դպրոցը:
- 1972-1977թթ. սովորել և ավարտել եմ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետի «Մեքենաշինության տեխնոլոգիա, մետաղահատ հաստոցներ և գործիքներ» մասնագիտությունը, ստանալով ինժեներ մեխանիկի որակավորում:
- 1977-1980թթ. աշխատել եմ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հատուկ կոնստրուկտորական բյուրոյում որպես ճարտարագետ կոնստրուկտոր:
- 1980-1983թթ. աշխատել եմ "Պոզիտոր" արտադրական միավորման Հաշվիչ տեխնիկայի հատուկ կոնստրուկտորատեխնոլոգիական բյուրոյում ավագ ճարտարագետի պաշտոնում:
- 1981-1983թթ. անցել եմ գիտական փորձառություն Մոսկվայի Մեքենագիտության ինստիտուտում:
- 1983-1986թթ. սովորել եմ Մոսկվայի Մեքենագիտության ինստիտուտի նպատակային ասպիրանտուրայում:
- 1984-1985թթ. ասպիրանտուրային զուգահեռ սովորել և ավարտել եմ Մոսկվայի էլեկտրոնային մեքենաշինության ինստիտուտի որակավորման բարձրացման ֆակուլտետի "էլեկտրոնային արդյունաբերության հատուկ ռոբոտատեխնիկա" մասնագիտությունը:
- 1987թ. պաշտպանել եմ թեկնածուական թեզ մեխանիզմների և մեքենաների տեսության և ռոբոտատեխնիկայի բնագավառում:
- 1987-1988թթ. աշխատել եմ «Պոզիտոր» արտադրական միավորման Հաշվիչ տեխնիկայի հատուկ կոնստրուկտորատեխնոլոգիական բյուրոյում որպես առաջատար ճարտարագետ և համատեղությամբ դասավանդել եմ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտին կից Որակավորման բարձրացման միջոցառումներին ինստիտուտում:
- 1988-1993թթ. աշխատել եմ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի "Մեխանիզմների և մեքենաների տեսություն" ամբիոնում սկզբից որպես ավագ գիտաշխատող, իսկ 1991թ-ից՝ ավագ դասախոս: 1992-1993թթ. կատարել եմ ամբիոնի վարիչի տեղակալի պարտականությունները:
- 1991-1992թթ. գիտական և ուսումնամեթոդական փորձառություն եմ անցել Վիեննայի տեխնիկական համալսարանում:
- 1992թ. ՀՊՃՀ-ի գիտական Խորհրդի որոշմամբ շնորհվել է դոցենտի կոչում:
- 1994թ. ընտրվել եմ ՀՊՃՀ-ի Մեխանիկայի և մեքենագիտության դեպարտամենտի «Կիրառական մեխանիկա» սեկտորի դոցենտի պաշտոնում, իսկ 1995թ. նույն սեկտորի վարիչի պաշտոնում:
- 1995թ. երկու ամսով ՆԱՏՈ-ի ծրագրով գործուղվել եմ գիտական աշխատանքի Աթենքի տեխնիկական համալսարան:
- 2001թ. վերընտրվել եմ ՀՊՃՀ-ի Մեխանիկայի և մեքենագիտության դեպարտամենտի «Կիրառական մեխանիկա» ամբիոնի վարիչի պաշտոնում:
- 1994թ.-ից համատեղությամբ կատարում եմ նաև Մեխանիկայի և մեքենագիտության դեպարտամենտի վարիչի տեղակալի պարտականությունները:
- 2006 թ. ըտրվել եմ ՀՊՃՀ Մեխանիկայի և մեքենագիտության դեպարտամենտի պաշտոնում:
- 2008 թ. ՀՊՃՀ 80-ամյակի կապակցությամբ պարգևատրվել եմ ՀՀ Վարչապետի շնորհակալագրով:
- 2009 թ. ընտրվել եմ ՀՊՃՀ Մեխանիկա-մեքենագիտական ֆակուլտետի դեկան:

Անուսնացած եմ, ունեմ երկու որդի: